## ԳԵՐԱՊԱՏԻՎ Տ. ՄԱՄԲՐԵ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԻՐՈՒՆՅԱՆ



Գերապատիվ Տ. Մամբրե եպիսկոպոս Սիրունյանը Եգիպտոսի թեմի առաջնորդական փոխանորդն է։ Նա հաջորդել է երջանկահիշատակ Թորգոմ սրբազանին և տարիներ շարունակ, մեծ հեղինակությամբ վարում է այդ թեմը։ Մամբրե սրբազանի ջանքերով Եգիպտոսի թեմը դարձել է հայոց եկեղեցու լավագույն և օրինակելի թեմերից մեկը։ Թեմում հիմնվել են մի շարք հայկական դպրոցներ, որտեղ հայ մանուկները հնարավորություն ունեն սովորելու մայրենի լեզուն, գրականությունը և պատմությունը։ Թեմում ստեղծված են մի շարք հասարակական կազմակերպություններ, որոնք մեծ աշխատանք են տանում ինչպես Եգիպտոսի հայ գաղութը օրինակելի վիճակի մեջ դնելու, այնպես և վառ պահելու մեր ժողովրդի հայրենասիրությունը։

Մամբրե սրբազանը հատկապես մեծ աշխատանք կատարեց հայրենական ներկա պատերազմի շրջանում։ Արձագանքելով Ա-

մենայն Հայոց Հայրապետության Ազգըն-տիր Տեղակալ գերապատիվ Տ. Գևորգ արքեպիսկոպոսի Չորեքչյանի հայրենասիրական կոչին Կահիրեում և Ալեքսանդրիա-յում նա մի քանի անգամ կազմակերպել է հանգանակություն «Սասունցի Դավիթ» հրասայլի Ֆոնդի համար։ Հաբեշստանում իր եղած ժամանակ նա այնտեղ ևս գլխա-վորեց Ադիս Աբեբայի մեր փոքրիկ, բայց հայրենասեր համայնքի հայրենասիրական ձեռնարկումները։

Մամբրե սրբազանը հայրենասեր, եկե-ղեցասեր, ժողովրդասեր հոգևորական է և իր այդ լավագույն հատկությունների հա-մար սիրված է ժողովրդի լայն խավերի շրջանում։